ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2025 թվականի N 734-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող Մանվել Հակոբի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0098-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ջրառատ, Գ. Նժդեհի փողոց, 31 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 15
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2025 թվականի N 735-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳԻՍԻ ՍՎԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի բնակիչ Գրիգոր Սվարյանը դիմել է Արաքսի համայնքապետարան՝ Ակնաշեն գյուղի Հ. Բաղրամյան փողոց 36 հասցեում գտնվող, իրեն պատկանող / ըստ սեփականաշնորհման հանձնաժողովի 01.04.1991թ. թիվ06 որոշման և ըստ օրենքի ժառանգության վկայագրի՝ 2025թ-ի N3512, N3510 սեղանամատյանի/ 0,163հա հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 2001թվականի մայիսի 15-ը., հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի Հ. Բաղրամյան փողոց 36 հասցեում գտնվող //04-005-0039-0004/ ԿԾ/ գույքային միավորների նկատմամբ Գրիգոր Սարգիսի Սվարյանի /ծնվ. 1947թ/ գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0,163հա օրինական հողամասի և բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ /բնակելի տուն՝ 85,8քմ կառուցված 1980թ, ծածկած մուտք՝ 53քմ կառուցված 1980թ, ծածկ՝ 11,9քմ կառուցված 1980թ, աստիճանավանդակ՝ 15,8քմ կառուցված 1980թ, բնակելի տուն՝ 136,9քմ կառուցված 1980թ, բաց պատշգամբ՝ 2,3քմ կառուցված 1980թ, աստիճանահարթակ՝ 19,9քմ կառուցված 1980թ, տնտեսական շին.՝ 52,5քմ կառուցված 1980թ, ծածկ՝ 20քմ

կառուցված 1980թ../: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Գրիգոր Սարգիսի Սվարյանի /ծնվ. 1947թ/, սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի գրանցման վկայական:

4.Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Ակնաշեն, Հ.Բաղրամյան փողոց 36 հասցե:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 15
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 736-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1.2025 թվականի սեպտեմբերի 02-ին՝ ժամը 10:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Մեծամորի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
2.Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանի պահանջներով:
3.Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 737-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ԽՈՐՈՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1.2025 թվականի սեպտեմբերի 02-ին՝ ժամը 11:30–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Խորոնքի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
2.Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանի պահանջներով:
3.Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 738-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՅԿԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1.2025 թվականի սեպտեմբերի 02-ին՝ ժամը 13:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի «Հայկաշենի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
2.Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանի պահանջներով:
3.Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 739-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող Սաշա Սանասարի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0026-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ջրառատ, Հոկտեմբերյան փողոց, 18 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 740-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17–ի N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 17–րդ ենթակետը և Ա/Ձ Աշոտ Ներսիսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Աշոտ Ներսիսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնք Գայ գյուղի վարչական տարածքում 2025 թվականի 3-րդ եռամսյակին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:

2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 17–րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 741-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17-ի N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետը և Ա/Ձ Աշոտ Ներսիսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Աշոտ Ներսիսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում 2025 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ:

2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2025 թվականի N 742-Ա

ՀԱՅԿ ՄԱՐՏՈՒՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս, ուսումնասիրելով Հայկ Մարտունի Վարդանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը, պարզեցի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Հայկ Մարտունի Վարդանյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Խորոնք, Արարատյան փ., 6տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1–ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ վերջինիս կողմից իրականացվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-050-0065-0041 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում առանց շինարարության թույլտվության ինքնակամ հեղուկ վառելանյութի լցակետի կառուցում: Հայկ Վարդանյանի կողմից իրականացվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2–րդ մասով սահմանված խախտումներ, այն է՝ «2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել վարչական իրավախախտումների բացահայտման, վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման աշխատանքների իրականացման և վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննությանը մասնակցելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայքնի ղեկավարի 2025 թվականի հունվարի 23-ի N 12-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ կողմից 2025 թվականի հունիսի 30-ին կազմած արձանագրությունը:

Հայկ Վարդանյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2025 թվականի հուլիսի 09-ին տրված LO128653134AM ստացականը և 2025 թվականի հուլիսի 14-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ ապացույց/:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Արաքսի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսման օր էր սահմանվել 2025 թվականի հուլիսի 15-ին ժամը 11:00-ին: Հայկ Վարդանյանը ներկայացել է նշված օրը վարչական վարույթի լսմանը և գրավոր կերպով հայտնել իր կողմից իրավախախտման կատարման փաստը ընդունելու և առարկություններ չունենալու վերաբերյալ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունիսի 30-ին կազմած արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 09-ի «Վարչական վարույթ հարուցելու մասին» ծանուցագիրը և այն 2025 թվականի հուլիսի 14-ին ստացած լինելու փաստը:

Վարչական վարույթի լսումներ անցկացնելու վերաբերյալ Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 15-ի արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտող Հայկ Վարդանյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-050-0065-0041 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում առանց շինարարության թույլտվության ինքնակամ հեղուկ վառելանյութի լցակետ է կառուցվել: Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Արաքսի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում Հայկ Վարդանյանը 2025 թվականի հուլիսի 15-ին ժամը 11:00-ին ներկայացել է վարչական վարույթի լսմանը և գրավոր կերպով հայտնել իր կողմից իրավախախտման կատարման փաստը ընդունելու և առարկություններ չունենալու վերաբերյալ:

Արդյունքում Հանձնաժողովն, ուսումնասիրելով գործում առկա բոլոր փաստական և իրավական հանգամանքները, վարչական վարույթի լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը ներկայացրել է Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկել՝ իրավախախտող Հայկ Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ 2-րդ մասով սահմանված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և

կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով», նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Տվյալ պարագայում իրավախախտողն Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-050-0065-0041 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում առանց շինարարության թույլտվության ինքնակամ հեղուկ վառելանյութի լցակետ է կառուցել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»

օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» օրենքով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից ներկայացված արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Հայկ Մարտունի Վարդանյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-050-0065-0041 կադաստրային ծածկագրով հողամասի տարածքում առանց շինարարության թույլտվության ինքնակամ հեղուկ վառելանյութի լցակետ կառուցելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Տալ պարտադիր ցուցում իրավախախտող Հայկ Մարտունի Վարդանյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում վերացնել իր կողմից կատարված իրավախախտման հետևանքները:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73–րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝

Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 16
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 743-Ա

«ԱՐԱՔՍ ԹՌՉՆԱՖԱԲՐԻԿԱ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N390-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի տնօրեն Արտակ Սարգսյանի 2025 թվականի հունիսի 2-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղում «Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /04-086-0101-0021/ ծածկագրով արտադրական հողատարածքում ինքնակամ կառուցված 5109,6քմ արտաքին մակերեսով արտադրական շինությունները՝ համաձայն «Դավիթ Մովսեսյան» ԱՁ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2024UTH4QW:

2.Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է արտադրական նշանակության շինությունների 1քմ-ի համար 1813,5 Հայաստանի Հանրապետության դրամ, 1813,5*5109,6քմ=9266260 /ինը միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր վաթսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 9266260 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Ջրարբի գյուղի N900325183169 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 03-ի ««Արաքս Թռչնաֆաբրիկա» ՓԲԸ-ի կողմից կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու և Արաքս համայնքի ղեկավարի 2024թվականի ապրիլի 10-ի N394-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N390-Ա որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 17
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2025 թվականի N 744-Ա

ՄՀԵՐ ՄՈՎՍԵՍԻ ԱԴԱՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Միեր Ադամյանի 2025 թվականի մայիսի 12-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի բնակիչ Միեր Մովսեսի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող /04-012-0005-0023/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 113,9քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 15.0քմ մակերեսով ծածկը համաձայն «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2024JGWYEF:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է բնակելի նշանակության շինությունների 1քմ-ի համար 1209 Հայաստանի Հանրապետության դրամ, օժանդակ նշանակության շինությունների 1քմ-ի համար 725,4 Հայաստանի Հանրապետության դրամ; 1209*113,9քմ=137705 /մեկ հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր հինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ, 725.4*15քմ=10881 /տաս հազար ութ հարյուր ութսունմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ: Ընդամենը՝ 137705+10881=148586 /մեկ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր ութսունվեց/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 148586 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Ապագա գյուղի N900325162155 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 18
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2025 թվականի N 745-Ա

ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Նորիկ Աբրահամի Ինջիղուլյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը պարզեցի՝ որ քաղաքացի Նորիկ Աբրահամի Ինջիղուլյանը /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք գ. Գայ Երևանյան 3փ, 4տ/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործածվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից ստացված տեղեկանքների հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Նորիկ Ինջիղուլյանին հասցեագրված վարչական վարույթի շրջանակներում լսումների հրավիրելու վերաբերյալ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 09.07. 2025թ. թիվ 1783 ծանուցագիրն ուղարկվել է փոստային առաքմամբ /փոստային առաքանի՝ LO128648060AM, ծանուցագիրը ստացել է 09.07.2025 թվականին/:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նորիկ Ինջիղուլյանի կողմից առաջարկ չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համար հիմք հանդիսացող «E-community» ծրագրից ձեռք բերված տվյալները՝ Նորիկ Աբրահամի Ինջիղուլյանը չի կատարել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքերի մասով հարկային պարտավորությունները, որի հետևանքով 26.06.2025 թվականի դրությամբ գոյացել է 352.671 /երեք հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ պարտք, որից՝

1. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0003-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 21898 (քսանմեկ հազար ութ հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, որից 20702 (քսան հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի ապառքի գումար և 1196 (հազար հարյուր ինսունվեց) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

2. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0040-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 6410 (վեց հազար չորս հարյուր տաս) ՀՀ դրամ, որից 6060 (վեց հազար վաթսուն) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի ապառքի գումար և 350 (երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

3. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0003-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 24429 (քսանչորս հազար չորս հարյուր քսանինը) ՀՀ դրամ, որից 23095 (քսաներեք հազար իննսունհինգ) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի ապառքի գումար և 1334 (հազար երեք հարյուր երեսունչորս) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

4. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0040-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 8854 (ութ հազար ութ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ, որից 5954 (հինգ հազար ինը հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը 2008-2020թթ.-ի ապառքի գումար և 2900 (երկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամը 2008-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

5. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0040-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 8907 (ութ հազար ինը հարյուր յոթ) ՀՀ դրամ, որից 5993 (հիմգ հազար ինը հարյուր իննսուներեք) ՀՀ դրամը 2008-2020թթ.-ի ապառքի գումար և 2914 (երկու հազար ինը հարյուր տասնչորս) ՀՀ դրամը 2008-

2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

6. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-004-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 40574 (քառասուն հազար հինգ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, որից 41195 (քառասունմեկ հազար հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի ապառքի գումար և 2379 (երկու հազար յոթանասունինը) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

7. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0233-0022 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 7917 (յոթ հազար ինը հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, որից 7384 (յոթ հազար երեք հարյուր ութսունչորս) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի ապառքի գումար և 533 (հինգ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը 2024-2025թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

8. Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում գտնվող 04-033-0040-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի մասով՝ 288998 (երկու հարյուր ութսունութ հազար ինը հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, որից 192644 (հարյուր ինսուներկու հազար վեց հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը 2008-2019թթ.-ի ապառքի գումար և 96354 (իննսունվեց հազար երեք հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը 2008-2019թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ Օրենսգիրք/ 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝անշարժ գույքի հարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ...:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ, 224-րդ, 225-րդ, 226-րդ, 227-րդ, 236-րդ, 397-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նորիկ Աբրահամի Ինջիղուլյանից հօգուտ Արաքս համայնքի բյուջեի գանձել 352.671 / երեք հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ չվճարված հարկային պարտավորությունների գումար:

2.Հարկային պարտավորությունների վճարումը կատարել Արաքս համայնքի 900325006121 հաշվեհամարին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 18
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2025 թվականի N 746-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N708-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 9-ի «ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԳԱՐԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N260-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N708-Ա որոշման 4-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

««Բնակելի տանը տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Ջրարբի Խ. Աբովյան փողոց 9-րդ փակուղի, 1/1 շենք 1 հասցե/» բառերը փոխարինել «Բնակարանին տալ Հայաստանի Հանրապետություն, Արաքս համայնք, գյուղ Ջրարբի Խ. Աբովյան փողոց 9-րդ փակուղի, 1/1 շենք 1 հասցե»» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 21
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2025 թվականի N 747-Ա

ԶՈՀՐԱԲ ԱՎԵՏԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս, ուսումնասիրելով Զոհրաբ Ավետի Մարտիրոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը պարզեցի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Զոհրաբ Ավետի Մարտիրոսյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Գայ, Կ. Դեմիրճյան փ., 28տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ վերջինիս կողմից իրականացվել է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի Կ. Դեմիրճյան փ. 28 տան առջևի Հ-12 Հանրապետական նշանակության ճանապարհի մայթի և ասֆալտբետոնե ծածկի առանց թույլտվության քանդում:

Անձի կողմից իրականացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված խախտումներ, այն է՝ «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով»:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2025 թվականի մայիսի 14-ին կազմված արձանագրությունը և թվով 3 լուսանկարները:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Զոհրաբ Մարտիրոսյանն, իր ցանկությամբ, ստացել է առձեռն 2025 թվականի մայիսի 19-ին /հիմք՝ ծանուցագրի մեր օրինակի վրա արված գրառումը/ վարչական վարույթի շրջանակներում հրավիրված լսման օրը: Վարչական վարույթի շրջանակներում հրավիրված լսման ժամանակ Զոհրաբ Մարտիրոսյանը 1 (մեկ) ամիս ժամանակ է

խնդրել իր կողմից քանդված ճանապարհի մայթը և ասֆալտբետոնե ծածկը նախնական տեսքի բերելու համար:

Վերոգրյալից ելնելով, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 246.2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում», Արաքս համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 20-ի N 542-Ա որոշմամբ /Որոշումը Զոհրաբ Մարտիրոսյանը ստացել է առձեռն, հիմք՝ 2025 թվականի մայիսի 22-ին Որոշման մեկ օրինակի վրա արված գրառումը/ Զոհրաբ Ավետի Մարտիրոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել էր մինչև կասեցման համար հիմք դարձած հանգամանքների վերացումը, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

2025 թվականի մայիսի 16–ին հարուցված վարչական վարույթը համարել վերսկսված, քանի որ դրա կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքը վերացել է:

Զոհրաբ Մարտիրոսյանը 2025 թվականի հուլիսի 18-ին հայտնել է իր կողմից կատարված իրավախախտումն ամբողջությամբ վերացնելու վերաբերյալ, ինչի կապակցությամբ Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 09-ի N 04-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 21-ին կազմվել է արձանագրություն և կատարվել թվով 2 լուսանկար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2–րդ մասի «ա» ենթակետով, որի համաձայն՝ Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ ա) անձն, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի կողմից 2023 թվականի ապրիլի 13–ին ներկայացված զեկուցագիրը.

Որոշում եմ՝

1. Զոհրաբ Ավետի Մարտիրոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Վարչական վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով

սահմանված ընդհանուր կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 21

Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 748-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-056-0005-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Հայկաշեն, 16-րդ փողոց, 24 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 749-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17–ի N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 14–րդ ենթակետը և Ա/Ձ Հմայակ Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Հմայակ Հարությունյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում 2025 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 17–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 140-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 14–րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 750-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Վաչիկ Ծերունի Ներսիսյանի սեփականության իրավունքով պատկանող 04-013-0009-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Առատաշեն, Զորավար Անդրանիկի փողոց, 9 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 751-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող 0.41505 հա հողամասի /ծածկագիր՝ 04-033-0077-0062/ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 752-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում գտնվող 0.2755 հա հողամասի /ծածկագիր՝ 04-017-0028-0013/ նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման/ պետական տուրքի և պետական գրանցման համար գումար փոխանցելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900005016176 հաշվեհամարին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեի 01.1.1–ի (Արաքսի համայնքապետարան) 4823 հոդվածից 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 900013220018 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 753-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-056-0024-0010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Հայկաշեն, 8-րդ փողոց, 2-րդ փակուղի, 1 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 754-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող Հարություն Սերյոժայի Քերոբյանին սեփականության իրավունքով պատկանող 04-013-0003-0008 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Առատաշեն, Մխիթար Սպարապետի փողոց, 27 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2025 թվականի N 755-Ա

ՄԱՐԻՆԵ ԶԱՎԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Մարինե Նազարյանի կողմից /հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Քանքաեռ-Զեյթուն, Դրոյի փ. 7շ., բն. 50/ Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-033-0225-0007 կադաստրային ծածկագրով /նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող/ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, գործառնական նշանակությունն ու հողատեսքն ինքնակամ փոփոխելու վերաբերյալ պարզեց, որ Մարինե Նազարյանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Արդյունքում ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից 2025 թվականի հուլիսի 11-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի վերը նշված դրույթների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Մարինե Նազարյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2025 թվականի հուլիսի 14-ին տրված LO128701566AM ստացականը և 2025 թվականի հուլիսի 17-ին առաքանին հանձնված լինելու

վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Արաքս համայնքում հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 09-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 08-ին կազմված արձանագրությունը և դրան կից ներկայացված լուսանկարների պատճենները / Արաքսի համայնքապետարանի պաշտոնական կայքում մուտքագրվել է 2025 թվականի հուլիսի 09-ին, մտիցի համար՝ 2017/:

Արաքս համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 11-ի «Վարչական վարույթ հարուցելու մասին» ծանուցագիրը և վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերն ամբողջությամբ (արձանագրությունը, արձանագրությունը կազմելիս իրավախախտման վայրում կատարված թվով 3 / երեք/ լուսանկարների պատճենները և 04-033-0225-0007 կադաստրային ծածկագրով հողամասի էլեկտրոնային քարտեզից ստացված լուսանկարի պատճենը) ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

Վարչական վարույթի լսումներ անցկացնելու վերաբերյալ վարչական իրավախախտումների բացահայտման, վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման աշխատանքների իրականացման և վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննությանը մասնակցելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայքնի ղեկավարի 2025 թվականի հունվարի 23-ի N 12-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ 2025 թվականի հուլիսի 21-ի արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտող Մարինե Նազարյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող, 04-033-0225-0007 կադաստրային ծածկագրով /նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող/ հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, գործառնական նշանակությունն ու հողատեսքն ինքնակամ փոփոխվել է, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն, առկա են ձկնաբուծական լճեր:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, Արաքսի համայնքապետարանում հարուցված վարչական

վարույթի շրջանակներում Մարինե Նազարյանի լիազորմամբ վարույթի լսմանը ներկայացել և մասնակցել է նրա մայրը՝ Լիդա Գեննադիի Նազարյանը, ով հայտնել է, որ համաձայն է ձեռնարկել քայլեր հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու համար:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով գործում առկա փաստական և իրավական հանգամանքները, վարչական վարույթի լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը ներկայացրել է Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող Մարինե Նազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի՝ 150.000 / հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ և 5–րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերի՝ հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերն ու գործառնական նշանակությունը և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումները նշվում են՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականներում, պայմանագրերում և այլ փաստաթղթերում. համայնքների հողերի օգտագործման սխեմաներում, գլխավոր հատակագծերում: Օրենսգրքի 8–րդ հոդվածի 1–ին մասի, 9–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա:

Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա

տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի:

Օրենսգրքի 43–րդ հոդվածի 2–րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հողամասերի սեփականատերերը, օգտագործողները պարտավոր են հողամասերն օգտագործել դրանց նպատակային նշանակությանը համապատասխան, ինչպես նաև այնպիսի եղանակներով, որոնք չպետք է վնաս պատճառեն հողին՝ որպես բնության և տնտեսական օբյեկտի:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ հողերի նպատակային նշանակությունը, հողատեսքերն ու գործառնական նշանակությունը և հողերի օգտագործման նկատմամբ սահմանափակումները, ի թիվս այլնի, նշվում են՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականներում:

Հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Հողամասերի սեփականատերերը, օգտագործողները պարտավոր են հողամասերն օգտագործել դրանց նպատակային նշանակությանը համապատասխան:

Տվյալ պարագայում իրավախախտողը ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող, 04-033-0225-0007 կադաստրային ծածկագրով հողամասն օգտագործել է ոչ նպատակային նշանակությամբ, ինքնակամ փոփոխել է նույն հողամասի գործառնական նշանակությունն ու հողատեսքը՝ իրականացնելով ձկնաբուծություն, ինչն իրենից ներկայացնում է գյուղատնտեսական նպատակային նշանակության և արոտավայր գործառնական նշանակության հողամասի ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից ներկայացված արձանագրությունը.

Որոշում եմ՝

1. Իրավախախտող Մարինե Զավենի Նազարյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող, 04-033-0225-0007 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու և գործառնական նշանակությունն ու հողատեսքը ինքնակամ փոփոխելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150. 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3.Մարինե Զավենի Նազարյանին տալ պարտադիր ցուցում՝ սույն որոշումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում դադարեցնել հողամասի ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործումը, վերացնել իրավախախտման հետևանքները՝ հողամասը բերելով նախնական տեսքին:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73–րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 22
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2025 թվականի N 756-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում գտնվող Մեխակ Սրապիոնի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 04-085-0006-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ջրառատ, Ջորավար Անդրանիկի փողոց, 5-րդ նրբանցք, 24 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2025 թվականի N 757-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԱՐՄԱՎԻՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ նախագահի 2025 թվականի հուլիսի 28-ին Արաքսի համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրված գրությունը, «Գենդերազգայուն մոտեցում» խորագիրը կրող 2-օրյա վերապատրաստմանն Արաքսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամի մասնակցությունն ապահովելու նպատակով.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի ղեկավարի խորհրդական Նարինե Դավթյանին 2025 թվականի հուլիսի 24-ին և 25-ին գործուղել քաղաք Արմավիր, «Նուկ» քաղաքացիական ակումբ-սրճարան /հասցե՝ ք. Արմավիր, Սայաթ-Նովա 122/:
2. Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին՝ (Ռ. Թեմուրյան) սահմանված կարգով հատուցել գործուղման հետ կապված ծախսերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2025 թվականի N 758-Ա

ՍԵՐՅՈԺԱ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս, ուսումնասիրելով Սերյոժա Համազասպի Սարգսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործը պարզեցի՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Սերյոժա Համազասպի Սարգսյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ջրառատ, Վ. Մամիկոնյան փ., 2տ./ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով հարուցվել է վարչական վարույթ, քանի որ վերջինիս կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի Մեծամորի խճուղի 7/3 հասցեի տարածքում իրականացվել է համայնքային ճանապարհի մայթի քանդում:

Անձի կողմից իրականացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3–րդ մասով սահմանված խախտումներ, այն է՝ «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով»:

Վարույթի հարուցման համար հիմք էր հանդիսացել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2025 թվականի հուլիսի 03-ին կազմված արձանագրությունը:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Սերյոժա Համազասպի Սարգսյանը ստացել է առձեռն 2025 թվականի հուլիսի 11-ին /հիմք՝ ծանուցագրի մեր օրինակի վրա արված գրառումը/:

2025 թվականի հուլիսի 14-ին վարչական վարույթի շրջանակներում հրավիրված լսման ժամանակ Սերյոժա Համազասպի Սարգսյանը 2 (երկու) ամիս ժամանակ է խնդրել իր կողմից քանդված մայթը վերականգնելու և տարածքը բարեկարգելու համար:

Վերոգրյալից ելնելով, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 246.2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում».

Որոշում եմ՝

1. Սերյոժա Համազասպի Սարգսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել, մինչև կասեցման համար հիմք դարձած հանգամանքների վերացումը, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:
2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2025 թվականի N 759-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում գտնվող Հմայակ Բարխուդարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-017-0005-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Արաքս (Էջմիածնի շրջ.), Պ. Սևակի փողոց, 32 հասցե:
2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2025 թվականի N 760-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, նոտարական ծառայությունների մատուցման նպատակով.

Որոշում եմ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2025 թվականի բյուջեի 1.6.1–ի (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) 4239 հոդվածից 48.000 (կառասունութ հազար) ՀՀ դրամ փոխանցել հ/հ 1570094455760100 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2025 թվականի N 761-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 04-Ի N 1315-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34–րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 04-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Ավագյանին գործառույթներ վերապահելու մասին» N 1315-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի գործունեությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում վերապահել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Ավագյանին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2025թ. հուլիսի 23
Արաքս համայնք